



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2019 թվականի N 64

ՀՐԱՆՏ ՌՈՄԱՅԻ ԱՍՐՅԱՆԻՆ ՍԱՌԵԱՐԱՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով, << Հողային օրենսգրքի >> 7-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հրանտ Ռոմայի Ասրյանի դիմումը որոշում եմ.

1. Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի Ֆրոնտիկ Թևոսյանի փողոց 5-րդ փակուղի թիվ 1/7 (ծածկագիր՝ 07-048-0054 0235, վկայական N 13012015-07-0010) հասցեի հողամասում սառնարանի կառուցման նպատակով Հրանտ Ռոմայի Ասրյանին տալ շինարարության թույլտվություն՝ համաձայն հաստատված նախագծի:
2. Սույն որոշումով մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ապրիլի 2019 թվականի N 65

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ կետերի և հիմք ընդունելով Կարեն Վահանի Հայրապետյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Կոտայքի մարզ գյուղ Նոր Գեղի հասցեում գտնվող 07-048-0071-0025 կադաստրային ծածկագրով (սեփականության վկայական 1476735, տրված 24.07.2003 թվական) անշարժ գույքին տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ գյուղ Նոր Գեղի Զորավար Անդրանիկ փողոց տուն 4

2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:


3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ. ապրիլի 3
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 ապրիլի 2019 թվականի N 66

«ՆՈՐ ԳԵՂԻ ԵՎ ԱՐՏԱՄԵՏ ԻՆՔՆԱՀՈՍ ՈՒՐԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ»
ՕԲՅԵԿՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով, «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ Ջրային կոմիտեյի «Ջրային տնտեսության ԾԻԳ» ՊՀ-ի դիմումը որոշում եմ.

1. «Նոր Գեղի և Արտամետ ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում» օբյեկտի կառուցման նպատակով ՀՀ Ջրային կոմիտեյի «Ջրային տնտեսության ԾԻԳ» ՊՀ-ին տալ շինարարության թույլտվություն՝ համաձայն հաստատված նախագծի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ.ապրիլի 3
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 ապրիլի 2019 թվականի N 67

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 162-րդ հոդվածի երկրորդ մասի պահանջով և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Արտուշ Յականի Կաղյանի կողմից իրականացվել է առևտուր ոչ սահմանված վայրում, որոշում եմ.

1.Քաղաքացի Արտուշ Յականի Կաղյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 15.000 (տասնհինգ հազար) դրամ գումարի չափով:


2.Պարտավորեցնել Արտուշ Յականի Կաղյանին՝ օրենքով նախատեսված 15-օրյա ժամկետում մուծելու տուգանքը՝ 900115104060 հաշվեհամարին:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ.ապրիլի 4
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ապրիլի 2019 թվականի N 68

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 5-րդ մասի և հիմք ընդունելով Գևորգ Վարդանյանի հայտը՝ որոշում եմ.

1. Գևորգ Վարդանյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծ ալին առաջադրանք)՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Նոր Գեղի համայնք Խանջյան փողոց 67 (ծածկագիր՝ 07-048-0078-0018, վկայական N 27032019-07-0033) հասցեի հողամասում բնակելի տուն և պարիսպ կառուցելու նախագծային փաստաթղթերի մշակման համար:
2. Գևորգ Վարդանյանին
 - 1) նախագիծը ներկայացնել համաձայնեցման
 - 2) կառուցապատման աշխատանքները սկսել շինարարության թույլտվություն ստանալուց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ Նոր Գեղի համայնքապետարան ներկայացնելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ.ապրիլի 4
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ապրիլի 2019 թվականի N 69

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ կետերի և հիմք ընդունելով Մարգար Աբգարյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Կոտայքի մարզ գյուղ Նոր Գեղի հասցեում գտնվող 07-048-0061-0005 կադաստրային ծածկագրով (սեփականության վկայական 415408, տրված 08.07.2002 թվական) անշարժ գույքին տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ գյուղ Նոր Գեղի Պարույր Սևակ փողոց տուն 3

2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ.ապրիլի 4
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ապրիլի 2019 թվականի N 70

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, - 48-րդ կետերի և հիմք ընդունելով Մովսիսյան Վահրամ Մարտիրոսի դիմումը՝ որոշում եմ.

1. Կոտայքի մարզ գյուղ Նոր Գեղի հասցեում գտնվող 07-048-0069-0006 կադաստրային ծածկագրով (սեփականության վկայական 1417602, տրված 15.07.2003 թվական) անշարժ գույքին տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ գյուղ Նոր Գեղի Աննո Բաբաջանյան փողոց տուն 17

2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ. ապրիլի 8
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ապրիլի 2019 թվականի N 71

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով այն, որ քաղաքացի Վահան Խաչիկի Վարժապետյանի և Սաթիկ Քյասինյանի սեփականությունը հանդիսացող 07-048-0123-0004 կադաստրային ծածկագրով 0.085 հա բնակելի կառուցապատման հողամասի վրա քաղաքացի Վահան Խաչիկի Վարժապետյանի կողմից կառուցված բնակելի նշանակության բնակելի տունը և օժանդակ շինությունները չեն գտնվում «Հողային օրենսգրքի» 60 հոդվածով սահմանված հողամասի վրա ինչպես նաև ինժեներատրանսպորտային օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված են քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան չեն հակասում փողոցի ճարտարապետական ընդհանուր նկարագրին ու կառուցապատման պլաններին և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանված շահերը և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Վահան Խաչիկի Վարժապետյանի դիմումը՝ **որոշում են**

1. Օրինականացված քաղաքացի Վահան Խաչիկի Վարժապետյանին սեփականության իրավունքով պատկանող 07-048-0123-0004 կադաստրային ծածկագրով 0,08500 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում առկա 10,6 քմ մակերեսով պարիսպը:
2. Առաջարկել քաղաքացի Վահան Խաչիկի Վարժապետյանին օրինականացման համար 60 օրյա ժամկետում վճարել՝ պարսպի համար՝ $10,6 \times 6000 \times 0,21 = 13356$ դրամ:
3. 60 օրյա ժամկետում վճարումը չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ.ապրիլի 8
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ապրիլի 2019 թվականի N 72

ՔԱՂԱՔԱՅՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության << Հողային Օրենսգրքի>> 64-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի և հիմք ընդունելով Ռաշիդ Զասիմի Մուրադյանի դիմումը որոշում եմ.

1. Ռաշիդ Զասիմի Մուրադյանի անհատույց սեփականության իրավունքով պատկանող 07-048-0103-0006 կադաստրային ծածկագրով 0,080 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին կից ավել օգտագործվող 0.00058 հա հողատարածքը .
2. Հաշվի առնելով, որ տվյալ հողամասը ներառված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված հողատարածքների ցանկում, նրա հատկացումը չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, նրանում կառուցված չեն ինժինեռատրանսպորտային օբյեկտներ, ուստի սեփականության իրավունքով պատկանող 0.08 հա հողամասին կից ավել օգտագործվող 0.00058 հա հողամասը հատկացնել նրան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ապրիլի 2019 թվականի N 73

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50,58-60-րդ հոդվածների պահանջների, հիմք ընդունելով 2019 թվականի մարտի 20-ի դրությամբ կազմված հողի հարկի և գույքահարկի գծով հարկային պարտավորությունների վերաբերյալ ամփոփ տեղեկանքները և հաշվի առնելով, որ

1. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և ՀՀ Ոստիկանության ճանապարհային ոստիկանության կողմից տրված ելակետային տվյալների՝ Նոր Գեղի համայնքի 07-048-003-001, 07-018-116-018 կադաստրային ծածկագրով կրող անշարժ գույքերը՝ շինությունները և հողամասերը հանդիսանում են քաղաքացի Նորիկ Բախշիկի Սեդրակյանի սեփականությունը, ինչպես նաև MITSUBISHI PAJERO մակնիշի 88MA883 համարանիշով ավտոմեքենան հանդիսացել է Նորիկ Բախշիկի Սեդրակյանի սեփականությունը:

2. Համաձայն հարկային պարտավորությունների վերաբերյալ ամփոփ տեղեկանքների՝

1) 2019 թվականի մարտի 20-ի դրությամբ Նորիկ Բախշիկի Սեդրակյանի կողմից համայնքի բյուջե վճարման ենթակա շինության գույքահարկը 2018թ. կազմում է ընդհանուր առմամբ 68600 ՀՀ դրամ, որից տույժ՝ 5184 ՀՀ դրամ:

2) 2019 թվականի մարտի 20-ի դրությամբ Նորիկ Բախշիկի Սեդրակյանի կողմից համայնքի բյուջե վճարման ենթակա հողի հարկը առ 2018 թվականը կազմում է ընդհանուր առմամբ 3585 ՀՀ դրամ, որից տույժ՝ 177 ՀՀ դրամ:

1) 2019 թվականի մարտի 20-ի դրությամբ Նորիկ Բախշիկի Սեդրակյանի կողմից համայնքի բյուջե վճարման ենթակա փոխադրամիջոցի գույքահարկը 2013թ. կազմում է ընդհանուր առմամբ 59651 ՀՀ դրամ, որից տույժ՝ 21104 ՀՀ դրամ: **Որոշում եմ.**

1. Նորիկ Բախշիկի Սեդրակյանից հօգուտ Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի բյուջեի գանձել՝ 68600 ՀՀ դրամ՝ որպես շինության գույքահարկ (h/h 900115104151) և 3585 ՀՀ դրամ՝ որպես հողի հարկ (h/h 900115101011), 59651 ՀՀ դրամ՝ որպես փոխադրամիջոցի գույքահարկ (h/h 900115104045):

2. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Նորիկ Բախշիկի Սեդրակյանին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ. ապրիլի 8
գ. Նոր Գեղ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +374949009060, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ապրիլի 2019 թվականի N 74

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N 83 որոշման պահանջներով որոշում եմ.

1. Նոր Գեղի համայնքի նորածին 5 /հինգ/ երեխաների համար հատկացնել միանվագ օգնություն, ընդամենը՝ 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ, համաձայն հավելված N 1:

2. Նոր Գեղի հետևյալ անապահով ընտանիքներին տալ դրամական օգնություն՝ 470000 /չորս հարյուր յոթանասուն հազար/ դրամ, համաձայն հավելված N 2:

Ընդամենը՝ 620 000/վեց հարյուր քսան հազար/ դրամ:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ.ապրիլի 8
գ. Նոր Գեղի

Հավելված N 1
Նոր Գեղի գյուղական համայնքի ղեկավարի
2019թվականի ապրիլի 8-ի N 74 որոշման



ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻԱՆՎԱԳ ՕԳՆՈՒԹՅԱՆ
ՑՈՒՑԱԿ

N	Ազգանուն, անուն	Գումար
1	Մարգարյան Հրաչ	30000
2	Մաճկալյան Գրիգոր	30000
3	Սլոյան Ռուստամ	30000
4	Մարգարյան Գևորգ	30000
5	Մելիքյան Ռոբերտ	30000
Ընդամենը՝ վաթսույն հազար դրամ		150000



Հավելված N 2
Նոր Գեղի գյուղական համայնքի ղեկավարի
2019թվականի ապրիլի 8-ի N 74 որոշման

N	Ազգանուն, անուն	Գումար /դրամ/
1	Աբալյան Նարինե	40000
2	Հակոբյան Նոնա	40000
3	Օսիպյան Արմինե	30000
4	Համբարձումյան Սերգո	20000
5	Մադոյան Էրիկ	10000
6	Կարապետյան Խաժակ	40000
7	Մամիկոնյան Վանուհի	20000
8	Թութիազյան Հասմիկ	40000
9	Օզմանյան Խազալ	10000
10	Գրիգորյան Հրեդեն	30000
11	Սահակյան Արմեն	40000
12	Գրիգորյան Կարեն	40000
13	Աթոյան Անուշ	20000
14	Խաչատրյան Վաչագան	40000
15	Բարսեղյան Մովսես	40000
16	Պետրոսյան Սարգիս	10000
Ընդամենը՝ չորս հարյուր յոթանասուներեք հազար դրամ		



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +374949009060, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ապրիլի 2019 թվականի N 75

ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ <<ԱՐՄԱՆ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ 1227 ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին" օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Նոր Գեղի համայնքապետարանի ու «Արման» ՍՊԸ-ի միջև 2005 թվականի հունիսի 7-ին կնքված 1227 վարձակալության պայմանագրի 6.3 և 6.3.1 կետերը՝
որոշում եմ.

1. Նոր Գեղի համայնքապետարանի ու <<Արման>> ՍՊԸ-ի միջև 2005 թվականի հունիսի 7-ին կնքված 1227 վարձակալության պայմանագիրը լուծել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ.ապրիլի 9
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, 093335600; norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ապրիլի 2019 թվականի N 76

«ԱՋԱՏ ԿՆՅԱԶՅԱՆ» Ա/Ձ-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջներով որոշում եմ.

1. «Ազատ Կնյազյան» Ա/Ձ-ին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվություն 2019թվականի 2-րդ եռամսյակի համար:

2. Գանձել տեղական տուրք օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ. ապրիլի 9
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, 093335600, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ապրիլի 2019 թվականի N 77

«ՈՐԴԻ ԱՎԱԳ» ՍՊԸ-ԻՆ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջներով որոշում եմ.

1. «Որդի Ավագ» ՍՊԸ-ին տալ հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն 2019 թվականի համար:

2. Գանձել տեղական տուրք օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ. ապրիլի 9
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, 093335600, *norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ապրիլի 2019 թվականի N 78

«ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԵՆԵՔԵՐԻՄ» Ա/Ձ-ԻՆ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջներով որոշում եմ.

1. «Առաքելյան Սենեքերիմ» Ա/Ձ-ին տալ հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն 2019թվականի համար:

2. Գանձել տեղական տուրք օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ. ապրիլի 9
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 ապրիլի 2019 թվականի N 79

ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 170
ՇԽՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 34-րդ հոդվածի 1-ին մասը **որոշում եմ**.

1. Նոր Գեղի համայնքի ղեկավարի 2018 թվականի հոկտեմբերի 27-ի N 19 տալ շինարարության թույլտվություն օբյեկտի հիմնական ցուցանիշներն են կետում «բնակելի տուն» բառը փոխարինել «բնակելի տուն, օժանդակ շինություններ, քարե պարիսպ» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ.ապրիլի 9

գ.Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 ապրիլի 2019 թվականի N 80

ՅՈՒՐԻԿ ՎԻՐԱԲՅԱՆԻՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Յուրիկ Վիրաբյանի դիմումն ու համապատասխան փաստաթղթերի առկայությունը՝ որոշում եմ.

1. Ձևակերպել կառուցապատող Յուրիկ Վիրաբյանի կողմից իրականացված Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք 07-048-0098-0020 կադաստրային ծածկագրով 0,078 հա հողամասում բնակելի տան ավարտական ակտը (շահագործման թույլտվությունը (շահագործման թույլտվությունը կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ.ապրիլի 9

գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ապրիլի 2019 թվականի N 81

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ կետերի և հիմք ընդունելով Յուրիկ Վիրաբյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Կոտայքի մարզ գյուղ Նոր Գեղի հասցեում գտնվող 07-048-0098-0020 կադաստրային ծածկագրով (սեփականության վկայական 1409729, տրված 29.07.2004 թվական) անշարժ գույքին տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ գյուղ Նոր Գեղի Հրանտ Մաթևոսյան փողոց տուն 28

2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ. ապրիլի 9
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ապրիլի 2019 թվականի N 82

ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 22.1-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով «ՄԿԶԲՆԱԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հատակագծերը՝ **որոշում եմ.**

1. Նոր Գեղի համայնքի Աղասի Խանջյան փողոց թիվ 49 հասցեում գտնվող, Ռաշիդ Զասիմի Մուրադյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 07-048-0103-0006 կադաստրային ծածկագրով 0,08058 հա հողամասում իր կողմից ինքնակամ կառուցված 42,45 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը (համաձայն հատակագծի) համարել օրինական:
2. Քանի որ ինքնակամ կառուցված շինությունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը՝ օրինականացման համար գումար չգանձել:
3. Ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, ինչպես նաև վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը: Շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ապրիլի 2019 թվականի N 83

ՍԵՐԺԻԿ ԲԱՂԱՅԱՆԻՆ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Նոր Գեղի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N 78-Ն որոշման և հաշվի առնելով Սերժիկ Բաղայանի դիմումը.

1. Սերժիկ Բաղայանին տալ քարե պարսպի քանդման թույլտվություն՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի Աղբյուրակի փողոց 34 (կադաստրային ծածկագիր՝ 07-048-0065-0061, վկայական N 2150791) հողամասում (քանդման թույլտվությունը կցվում է):
2. Սերժիկ Բաղայանը պարտավոր է Նոր Գեղի համայնքապետարանի 900115104177 հաշվեհամարին մուծել 5 000 (հինգ հազար) դրամ տեղական տուրք՝ քանդման թույլտվության համար:
3. Կառուցապատողը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Նոր Գեղի համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սերժիկ Բաղայանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ.ապրիլի 10
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ապրիլի 2019 թվականի N 84

ԵՍԹԵՐ ԱՐԱՄԱՅԻՍԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով, << Հողային օրենսգրքի >> 7-րդ հոդվածով և հիմք ընդունելով Եսթեր Արամայիսի Դանիելյանի դիմումը որոշում եմ.

1. Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի Միքայել Նալբանդյան փողոց թիվ 41 (ծածկագիր՝ 07-048-0052-0007, վկայական N 11022015-07-0018) հասցեի հողամասում բնակելի տան կառուցման նպատակով Եսթեր Արամայիսի Դանիելյանին տալ շինարարության թույլտվություն՝ համաձայն հաստատված նախագծի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ.ապրիլի 10
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ապրիլի 2019 թվականի N 85

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ կետերի՝ որոշում եմ.

1. Կոտայքի մարզ գյուղ Նոր Գեղի հասցեում գտնվող 07-048-0059-0045 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ գյուղ Նոր Գեղի Ռիսանողական փողոց հողամաս 4:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ. մարտի 13
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ապրիլի 2019 թվականի N 86

«ՋԵՄՄԱ ԱՐԱՄՅԱՆ» Ա/Ձ-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջներով որոշում եմ.

1. «Ջեմմա Արամյան» Ա/Ձ-ին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվություն 2019 թվականի 2-րդ եռամսյակի համար:
2. Գանձել տեղական տուրք օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ. ապրիլի 11
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ապրիլի 2019 թվականի N 87

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ կետերի՝ որոշում եմ.

1. Կոտայքի մարզ գյուղ Նոր Գեղի հասցեում գտնվող 07-048-0223-0008 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ գյուղ Նոր Գեղի Եղվարդի 2-րդ խճուղի հողամաս 5:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ.ապրիլի 11
գ.Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ապրիլի 2019 թվականի N 88

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ կետերի՝ որոշում եմ.

1. Կոտայքի մարզ գյուղ Նոր Գեղի հասցեում գտնվող 07-048-0038-0060 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ գյուղ Նոր Գեղի Վազգեն Սարգսյան փողոց տուն 16:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ. ապրիլի 12
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ապրիլի 2019 թվականի N 89

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ կետերի՝ որոշում եմ.

1. Կոտայքի մարզ գյուղ Նոր Գեղի հասցեում գտնվող 07-048-0038-0045 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ գյուղ Նոր Գեղի Գարեգի Նժդեհի փողոց տուն 3:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ. ապրիլի 12
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ապրիլի 2019 թվականի N 90

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 5-րդ մասի և հիմք ընդունելով Ալիկ Աղաջանյանի հայտը՝ որոշում եմ.

1. Ալիկ Աղաջանյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Նոր Գեղի համայնք Վազգեն Սարգսյան փողոց 16 (ծածկագիր՝ 07-048-0038-0060, վկայական N 2179511) հասցեի հողամասում բնակելի տուն և պարիսպ կառուցելու համար:
2. Ալիկ Աղաջանյանին
 - 1) նախագիծը ներկայացնել համաձայնեցման
 - 2) կառուցապատման աշխատանքները սկսել շինարարության թույլտվություն ստանալուց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ Նոր Գեղի համայնքապետարան ներկայացնելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ.ապրիլի 12
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ապրիլի 2019 թվականի N 91

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 5-րդ մասի և հիմք ընդունելով Հակոբ Հակոբյանի հայտը՝ որոշում եմ.

1. Հակոբ Հակոբյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Նոր Գեղի համայնք Գարեգին Նժդեհի փողոց 3 (ծածկագիր՝ 07-048-0038-0045, վկայական N 2156992) հասցեի հողամասում բնակելի տուն և պարիսպ կառուցելու համար:
2. Հակոբ Հակոբյանին
 - 1) նախագիծը ներկայացնել համաձայնեցման
 - 2) կառուցապատման աշխատանքները սկսել շինարարության թույլտվություն ստանալուց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ Նոր Գեղի համայնքապետարան ներկայացնելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ.ապրիլի 12
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ապրիլի 2019 թվականի N 92

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ
ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով, <<Հողային օրենսգրքի>> 7-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արմենուիի Անդրանիկի Առաքելյանի դիմումը որոշում եմ.

1. Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի Ֆրոնտիկ Թևոսյան փողոց 231 (ծածկագիր՝ 07-048-0038-0098, վկայական N 04022019-07-0089) հասցեի հողամասում հասարակական սպասարկման օբյեկտի կառուցման նպատակով Արմենուիի Անդրանիկի Առաքելյանին տալ շինարարության թույլտվություն՝ համաձայն հաստատված նախագծի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ.ապրիլի 18
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ապրիլի 2019 թվականի N 93

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱԲԱԽԱՆՅԱՆԻ ՆԿԱՏԱՄԱԲ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի, 53-րդ, 58-60-րդ հոդվածների, «Հողի հարկի մասին» օրենքի 1-ին և 16-րդ հոդվածների, իրավահարաբերության պահին գործող «Հարկերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի և 29.1-ին հոդվածի 1-ին մասը, հիմք ընդունելով վարչական վարույթի քննարկման մասին 2019 թվականի ապրիլի 10-ի արձանագրությունը, Նոր Գեղի համայնքապետարանի կողմից 25.03.2019թ. տրված տեղեկանքները, որոնց համաձայն Հարություն Բաբախանյանին սեփականության իրավունքով պատկանող Նոր Գեղի համայնքի 07-048-0347-004 կադաստրային ծածկագրով 0.124 հա հողատարածքի հողի հարկի գծով պարտավորությունը 2009-2011 թվականների համար 25.03.2019թ. դրությամբ կազմում է 3441 դրամ, որից՝ ապառք՝ 2034 դրամ, տույժ՝ 1407 դրամ: 07-048-0347-003 կադաստրային ծածկագրով 0.123 հա հողատարածքի հողի հարկի գծով պարտավորությունը 2015-2018 թվականների համար 25.03.2019թ. դրությամբ կազմում է 6431 դրամ, որից՝ ապառք՝ 4885 դրամ, տույժ՝ 1546 դրամ: 07-048-0347-073 կադաստրային ծածկագրով 0.2506 հա հողատարածքի հողի հարկի գծով պարտավորությունը 2018 թվականի համար 25.03.2019թ. դրությամբ կազմում է 5603 դրամ, որից՝ ապառք՝ 5332 դրամ, տույժ՝ 271 դրամ: 07-048-0347-060 կադաստրային ծածկագրով 0.3509 հա հողատարածքի հողի հարկի գծով պարտավորությունը 2011-2018 թվականների համար 25.03.2019թ. դրությամբ կազմում է 64510 դրամ, որից՝ ապառք՝ 43213 դրամ, տույժ՝ 21297 դրամ: 07-048-0347-012 կադաստրային ծածկագրով 0.271 հա հողատարածքի հողի հարկի գծով պարտավորությունը 2015-2018 թվականների համար 25.03.2019թ. դրությամբ կազմում է 35453 դրամ, որից՝ ապառք՝ 26260 դրամ, տույժ՝ 9193 դրամ: 07-048-0347-011 կադաստրային ծածկագրով 0.271 հա հողատարածքի հողի հարկի գծով պարտավորությունը 2009-2011 թվականների համար 25.03.2019թ. դրությամբ կազմում է 18728 դրամ, որից՝ ապառք՝ 10941 դրամ, տույժ՝ 7787 դրամ: 07-048-0347-018 կադաստրային ծածկագրով 0.124 հա հողատարածքի հողի հարկի գծով պարտավորությունը 2009-2018 թվականների համար 25.03.2019թ. դրությամբ կազմում է 16837 դրամ, որից՝ ապառք՝ 11276 դրամ, տույժ՝ 5561 դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հարություն Բաբախանյանը սահմանված ժամկետում չի կատարել հողի հարկի գծով իր պարտավորությունները՝

1. Հարություն Բաբախանյանից հոգուտ Նոր Գեղի համայնքի բյուջե գանձել 143216 (մեկ հարյուր քառասուներեք հազար երկու հարյուր տասնվեց) դրամ հողի հարկի գումար (վճարման հաշվեհամարն է՝ 900115101011):

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Նոր Գեղի համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հարություն Բաբախանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ապրիլի 2019 թվականի N 94

ԳԱՌՆԻԿ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի, 53-րդ, 58-60-րդ հոդվածների, «Հողի հարկի մասին» օրենքի 1-ին և 16-րդ հոդվածների, «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ, 3-րդ հոդվածների, 4-րդ հոդվածի 1-ին մասի, 13-րդ հոդվածի 3-րդ մասի, իրավահարաբերության պահին գործող «Հարկերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի և 29.1-ին հոդվածի 1-ին մասը, հիմք ընդունելով վարչական վարույթի քննարկման մասին 2019 թվականի ապրիլի 10-ի արձանագրությունը, Նոր Գեղի համայնքապետարանի կողմից 25.03.2019թ. տրված տեղեկանքները, որոնց համաձայն Գառնիկ Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող Նոր Գեղի համայնքի 07-048-0012-007 կադաստրային ծածկագրով 0.08 հա հողատարածքի հողի հարկի գծով պարտավորությունը 2018 թվականի համար 25.03.2019թ. որոշումը կազմում է 692 դրամ, որից՝ ապառք՝ 660 դրամ, տույժ՝ 32 դրամ: 07-048-0012-007 կադաստրային ծածկագրով շինության գույքահարկի գծով պարտավորությունը 2011-2018 թվականների համար 25.03.2019թ. որոշումը կազմում է 36518 դրամ, որից՝ ապառք՝ 24836 դրամ, տույժ՝ 11682 դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գառնիկ Սիմոնյանը սահմանված ժամկետում չի կատարել հողի հարկի և գույքահարկի գծով իր պարտավորությունները՝

1. Գառնիկ Սիմոնյանից հոգուտ Նոր Գեղի համայնքի բյուջե գանձել 36518 (երեսունվեց հազար հինգ հարյուր տասնութ)
2. դրամ՝ որպես գույքահարկի գումար (վճարման հաշվեհամարն է՝ 900115104151) և 692 (վեց հարյուր ինսուներկու) դրամ՝ որպես հողի հարկի գումար (վճարման հաշվեհամարն է՝ 900115101011):
2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Նոր Գեղի համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գառնիկ Սիմոնյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՂԵՍԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ. ապրիլի 19
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghikotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ապրիլի 2019 թվականի N 95

ԱՐԹՈՒՐ ՍՈՍԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի, 53-րդ, 58-60-րդ հոդվածների, «Հողի հարկի մասին» օրենքի 1-ին և 16-րդ հոդվածների, «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ, 3-րդ հոդվածների, 4-րդ հոդվածի 1-ին մասի, 13-րդ հոդվածի 3-րդ մասի, իրավահարաբերության պահին գործող «Հարկերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի և 29.1-ին հոդվածի 1-ին մասը, հիմք ընդունելով վարչական վարույթի քննարկման մասին 2019 թվականի ապրիլի 10-ի արձանագրությունը, Նոր Գեղի համայնքապետարանի կողմից 25.03.2019թ. տրված տեղեկանքները, որոնց համաձայն Արթուր Սոսի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող Նոր Գեղի համայնքի 07-048-0066-0022 կադաստրային ծածկագրով 0.109 հա հողատարածքի հողի հարկի գծով պարտավորությունը 2014-2018 թվականների համար 25.03.2019թ. դրությամբ կազմում է 6235 դրամ, որից՝ ապառք՝ 4495 դրամ, տույժ՝ 1740 դրամ: 07-048-0066-0022 կադաստրային ծածկագրով շինության գույքահարկի գծով պարտավորությունը 2014-2018 թվականների համար 25.03.2019թ. դրությամբ կազմում է 35190 դրամ, որից՝ ապառք՝ 25057 դրամ, տույժ՝ 10133 դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արթուր Սոսի Ղազարյանը սահմանված ժամկետում չի կատարել հողի հարկի և գույքահարկի գծով իր պարտավորությունները՝

1. Արթուր Սոսի Ղազարյանից հոգուտ Նոր Գեղի համայնքի բյուջե գանձել 35190 (երեսունհինգ հազար հարյուր իննսուն) դրամ՝ որպես գույքահարկի գումար (վճարման հաշվեհամարն է՝ 900115104151) և 6235 (վեց հազար երկու հարյուր երեսունհինգ) դրամ՝ որպես հողի հարկի գումար (վճարման հաշվեհամարն է՝ 900115101011):

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Նոր Գեղի համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուր Սոսի Ղազարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ.ապրիլի 19

Դոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ապրիլի 2019 թվականի N 96

ԱՆՂՐԵՅ ԶԱԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի, 53-րդ, 58-60-րդ հոդվածների, «Հողի հարկի մասին» օրենքի 1-ին և 16-րդ հոդվածների, «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ, 3-րդ հոդվածների, 4-րդ հոդվածի 1-ին մասի, 13-րդ հոդվածի 3-րդ մասի, իրավահարաբերության պահին գործող «Հարկերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի և 29.1-ին հոդվածի 1-ին մասը, հիմք ընդունելով վարչական վարույթի քննարկման մասին 2019 թվականի ապրիլի 10-ի արձանագրությունը, Նոր Գեղի համայնքապետարանի կողմից 25.03.2019թ. տրված տեղեկանքները, որոնց համաձայն Անդրեյ Չալյանին սեփականության իրավունքով պատկանող Նոր Գեղի համայնքի 07-048-0069-0016 կադաստրային ծածկագրով 0.095 հա հողատարածքի հողի հարկի գծով պարտավորությունը 2013-2018 թվականների համար 25.03.2019թ. դրությամբ կազմում է 6686 դրամ, որից՝ ապառք՝ 4532 դրամ, տույժ՝ 2154 դրամ: 07-048-0069-0016 կադաստրային ծածկագրով շինության՝ գույքահարկի գծով պարտավորությունը 2011-2018 թվականների համար 25.03.2019թ. դրությամբ կազմում է 129819 դրամ, որից՝ ապառք՝ 91492 դրամ, տույժ՝ 38327 դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Անդրեյ Չալյանը սահմանված ժամկետում չի կատարել հողի հարկի և գույքահարկի գծով իր պարտավորությունները՝

